ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՔՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ ՍՄԲԱՏԻ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Սահակյան Ռուբեն Օնիկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարուքյան Արմեն Ցոլակի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հարությունյան Ավետիս Հմայակի

Առաջատար կազմակերպություն՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 20-ին, ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունվարի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության մեջ քննարկվող ժամանակահատվածը մի շրջան է, երբ հայ ժողովուրդը ստիպված էր բախվել զանգվածային բռնությունների, տեղահանության ու ապաստան որոնելու մարտահրավերներին, որոնք 20-րդ դարում դարձան միջազգային հանրության ուշադրության կենտրոնում՝ որպես փախստականության և էթնիկական բռնությունների դասական օրինակ, որը միջազգային պատմագրության մեջ հաճախ դրվում է ցեղասպանության նախադրյալների, էթնիկ զտումների և մարդասիրական արձագանքների համատեքստում: Այն հարցերը, որոնք կանգնած էին 1890-ական թթ. արևմտահայ գաղթականների առաջ՝ ապաստանի խնդիր, նյութական օգնություն, մշակութային ու կրոնական ինքնության պահպանում, նոր միջավայրում ինտեգրում, տեղական և միջազգային աջակցություն, շարունակում են մնալ արդիական նաև այսօր, երբ աշխարհը կանգնած է նոր տեղահանությունների ու փախստականների ընդունման և տեղավորման ճգնաժամերի առաջ: Հայոց պատմության այդ դրվագը ուսումնասիրելով՝ մենք ոչ միայն վերականգնում ենք պատմական արդարությունը, այլև կարևոր դասեր ենք քաղում համերաշխության, ինքնակազմակերպման և մարդասիրական արձագանքի կազմակերպման վերաբերյալ: Թեման արդիական է նաև պատմագիտության մեջ առկա բացերը լրացնելու տեսանկյունից: Մինչև այսօր համիդյան ջարդերի պատմության մեջ առավելապես ուսումնասիրվել են կոտորածների քաղաքական հիմքերը, միջազգային արձագանքը, սակայն զգալիորեն քիչ է ուսումնասիրված գաղթականների տեղաբաշխումը և նրանց տրամադրված օգնության կառուցվածքը, կազմակերպման մեխանիզմները, ներհայկական և միջազգային համակարգերի համատեղ աշխատանքը: Թեման արդիական է և կարևոր նաև այն առումով, որ այն ուսումնասիրում է արևմտահայ գաղթականության վիճակը, սոցիալ-տնտեսական պայմանները: Մինչ այժմ գրեթե լուսաբանված չէ Արևելյան Հայաստանում և Կովկասի կառավարչապետությունում ապաստանած արևմտահայ գաղթականության պատմությունը, հայ առաքելական եկեղեցու, հայ բարեգործական կազմակերպությունների ցուցաբերած օգնությունը, ինչպես նաև ռուս առաջադեմ հասարակության և իշխանությունների վերաբերմունքը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև համահայկական ինքնության պահպանման և համախմբման հարցերով: 19-րդ դարի վերջին արևմտահայ գաղթականներին ցուցաբերած աջակցությունը դառնում է պատմական վկայություն այն մասին, թե ինչպես կարող են ազգի տարբեր հատվածները (Արևելյան Հայաստան, եկեղեցական կառույցներ, բարեգործական միություններ) միավորվել դժվարին պահերին: Այսպիսի պատմական օրինակների ուսումնասիրությունը խթանում է ազգային համախմբման և փոխաջակցության մշակույթի արժևորումը նաև մեր օրերում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության մեջ նպատակ ունենք վերլուծելու ու ներկայացնելու Համիդյան ջարդերի հետևանքով աշխարհով մեկ սփռված գաղթականության խնդիրը և վերհանել թե ինչ ուժերով և մեխանիզմներով է կազմակերպվել արևմտահայ գաղթականներին ցուցաբերված օգնությունը:

Այս նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության իրական պատկերը,
- ներկայացնել 1890-ական թվականների ջարդերից փրկված արևմտահայ գաղթականության տեղաշարժը և ծանր կացությունը,
- ներկայացնել արևմտահայ գաղթականների վերադարձի խնդիրը
- լուսաբանել կովկասյան կառավարչապետության վարած քաղաքականությունը գաղթականների նկատմամբ,
- ներկայացնել հայ համայնքների, եկեղեցու, բարեգործական կառույցների մասնակցությունը օգնության գործընթացին,
- վերլուծել ռուսական և եվրոպական պետությունների, ինչպես նաև օտարերկրյա միսիոներների և միջազգային կազմակերպությունների արձագանքը:

Ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսությունը ժամանակագրորեն ընդգրկում է 1890-ական թթ.: 1894-1896 թթ. զանգվածային ջարդերի արդյունքում մեծ թվով արևմտահայ դարձավ գաղթական: Ուսումնասիրության շրջանակում ընդգրկում է նաև հետագա մի քանի տարիներին՝ մինչև 1903 թ., գաղթականներին ցուցաբերած օգնությունը: Անդրադարձ է կատարվել նաև 1908 թ. արևմտահայ գաղթականների վերադարձի խնդրին: Ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է խնդրո առարկա թեման մանրամասն ուսումնասիրելու անհրաժեշտությամբ:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Հիմնահարցը նախկինում պատմագիտության մեջ ներկայացված է մասնակիորեն և բաշխված կերպով: Թեմային առնչվող հարցերը հաճախ ուսումնասիրվել են լայնամասշտաբ՝ Օսմանյան կայսրությունում հայության կոտորածների, Համիդյան ջարդերի, հայ ազգային-ազատագրական շարժման կամ գաղթի ընդհանուր պատմության համատեքստում: Ատենախոսության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել արխիվային նորահայտ վավերագրեր՝ վերցված ՀՀ Հայաստանի ազգային արխիվից, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի /Մատենադարան/ արխիվներից, ժամանակի պարբերական մամուլից: Արխիվային ֆոնդերում պահվող փաստաթղթերն, զեկուցագրերը, վիճակագրական տեղեկանքները լույս են սփռում խնդրո առարկա թեմայի վերաբերվող ամենատարբեր հարցերի վրա: Սույն հետազոտությունն ունի գործնական նշանակություն և կարող է նպաստել ժամանակաշրջանի գաղթականության

պատճառների, հետևանքների և ազդեցության խորքային ընկալմանը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև հայոց ցեղասպանությանը նախորդող սոցիալական գործընթացների վերլուծության մեջ: Բացի այդ, աշխատանքը կարող է ծառայել որպես հիմք հետագա գիտական ուսումնասիրությունների, զեկուցումների և թեմատիկ քննարկումների համար:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության ուսումնասիրության համարառանձնակի և կարևոր ուսումնասիրության նյութեր են հանդիսացել արխիվային նորահայտ վավերագրերը՝ վերցված ՀՀ Հայաստանի ազգային արխիվից, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի /Մատենադարան/ արխիվներից: Արխիվային ֆոնդերում պահվող փաստաթղթերի, զեկուցագրերի և վիճակագրական տեղեկանքների գերակշռող մասը գիտական շրջանառության մեջ են դրվել առաջին անգամ: Գլխավոր սկզբնաղբյուրներից է համարվում Հայաստանի ազգային արխիվում պահվող 28 (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն) ֆոնդը, որը ընդարձակ տեղեկություններ է պարունակում գաղթականների դրության և ստացած օգնության մասին:

Օգտագործված գրականության մյուս խումբը հրատարակված արխիվային փաստաթղերի ժողովածուներն են, որոնք ներառում են տարբեր երկրների արխիվներում պահվող փաստաթղթեր[1]:

Ատենախոսության համար կարևոր և արժեքավոր նյութեր են պարունակում ժամանակի մամուլը: Միշտ չէ, որ հնարավոր է ստուգել մամուլի հրապարակումներում բերված փաստերը, սակայն տվյալ ժամանակահատվածի համար նրանք միակ աղբյուրն էին, որոնք տեղեկություններ էին հայտնում տարագիրների վիճակի, թվի և տեղակայման մասին: Ատենախոսության մեջ ներառվել է հետևյալ ամսագրերի, պարբերական հրատարակությունների, թերթերի հրապարակումները. «Անահիտ», «Արևելյան Մամուլ», «Արձագանք», «Արմենիա», «Արարատ», «Արաքս», «Դրօշակ», «Լուսա», «Հայք», «Հայրենիք», «Հնչակ», «Հանդես Ամսօրյա», «Նոր Կեանք», «Մշակ», «Մուրճ», «Տարազ»:

Ուսումնասիրության առումով աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեն նաև համիդյան կոտորածների ականատես օտարերկրացիների վկայությունները՝ օրագրերը, տեղեկագրերը, հուշագրությունները, ինչպես նաև Պ. Շարմետանի[2] և Է.

[1]Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (կազմ.՝ Ներսիսյան Մ., Սահակյան Ռ.), Երևան, 1991:

[2] Charmetant P., Tableau officiel des massacres d'Arménie dressè après enquêtes par les six ambassades du Constantinople et statistique dressé par des témois oculaires grégoriens et protestants, Paris, 1896.

Դիլոնի[3] «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուները[4], որտեղ կոտորածների ընթացքի և հետևանքների վերաբերյալ փաստական նյութեր են ներկայացվում: «Դեղին գիրքը» ներառում է ֆրանսիացի դիվանագետների զեկուցագրերը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին, որոնցում նկարագրվում է 1894-1896 թթ. հայկական կոտորածների մանրամասները[5]:

Արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև Գրիգոր Ջանշյանի նյութական աջակցությամբ ու ակտիվ մասնակցությամբ հրապարակված «Եղբայրական օգնությունը Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն[6]:

Խնդրո առարկա թեմային անդրադարձել է Լեոն (Ա. Բաբախանյան)՝ իր «Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911» աշխատության[7] մեջ, հեղինակը հանգամանալից նկարագրում է ԿՀԲԸ ցուցաբերած օգնությունը արևմտահայ գաղթականներին: Վաստակաշատ պատմաբան Լեոն նկարագրում է Թիֆլիսում, Բաթումում, Կաղզվանում, Իգդիրում և Վաղարշապատում հաստատված գաղթականների սոցիալ-տնտեսական կացությունը և նրանց ցուցաբերած օգնությունը:

Բաքվում ապաստանած հայ գաղթականների վիճակը նկարագրել է Արգար Աւագ քահանայ Տէր-Յարութիւնեանցը՝ իր «Հայ գաղթականները Բագու եւ նրանց վերադարձը» աշխատության[8] մեջ: Սույն աշխատանքում հեղինակը մանրամասն նկարագրում է համիդյան ջարդերից մազապուրծ եղած և Բաքու հասած հայ գաղթականների դրությունը: Ուսումնասիրությունում խոսվում է նաև հայ գաղթականների համար Բաքվում կազմակերպված օգնության մասին: Ինչպես նշում է հեղինակը 1896 թ. հայ գաղթականների հոծ բազմություն է մտնում Բաքու: Այդ թշվառներին ամոքելու համար կազմակերպվում են մարդասիրական ընկերություններ:

Դավիթ Անանունն (Դավիթ Տեր-Դանիելյան) իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության երրորդ հատորում[9] անդրադառնում է Կովկասի կառավարչապետ Գրիգորի Գոլիցինի վարած քաղաքականությանը հայ գաղթականների նկատմամբ: Հետազոտությունում կան վիճակագրական տեղեկություններ ինչպես հպատակություն ընդունած, այնպես էլ Արևմտյան Հայաստան վերադարձած հայերի

---

[3]Диллон Э., Положение дел в Турецкой Армении, Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ, Москва, 1897.

[4] Братская помощь пострадавшимъ въ Турции Армянамъ, Москва, 1897.

[5] Livre jaune. Documents diplomatiques. Affaires armeniennes. Prujets de reformes dans L'Empire Ottoman. 1893-1897, Paris, 1897.

[6] Տե՛ս Братская помощь пострадавшим в Турции армянам, Москва, 1897.

[7] Լեո, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911, Թիֆլիս, 1911:

[8] Տէր-Հարութիւնեանց Արգար աւագ քահանայ, Հայ գաղթականները Բագու և նրանց վերադարձը, Բագու, 1903:

[9] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր III, (1901-1918), Վենետիկ, 1926:

մասին:

Հիմնախնդրին անդրադարձել է նաև պատմաբան Կ. Թառոյանը՝ «Արևմտահայ ազատագրական պայքարը XIX դ. վերջին և XX դ. սկզբին» աշխատությունում[10]: Պատմաբանը վկայակոչում է մի քանի թվական տվյալներ՝ տարբեր վայրերում հաստատված գաղթականների թվի մասին: Կ. Թառոյանը անդրադառնում է գաղթականներին՝ ԿՀԲԸ-ի ցուցաբերած օգնությանը և նրանց աջակցելու համար հայ գաղթօջախներում բացված հանգանակություններին: Նա իր ուսումնասիրությունում անդրադառնում է նաև տարագիրների վերադարձի հետ կապված հիմնախնդիրներին:

Վերոհիշյալ խնդրի շուրջ իր ակնարկն է արել նաև Վ. Խոջաբեկյանը՝ իր «Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժը XIX-XX դարում XXI դարի շեմին»[11] աշխատության մեջ: Դրանում ընդհանուր առմամբ խոսվում է գաղթականների վիճակի և նրանց ցուցաբերված օգնության մասին:

Պ. Սիմոնյանը իր աշխատությունում[12] և հոդվածում[13] մանրամասն նկարագրում է Ռուսաստանի կողմից հայ գաղթականներին ցուցաբերած օգնությունը:

Հիմնախնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակած Հայոց պատմության բազմահատորյակի հատոր III-ի առաջին գրքում[14]:

Օգտվել ենք նաև հայ պատմաբաններ՝ Խուդինյան Գ.[15], Հատիկյան Հ.[16], Համբարյան Ա.[17], Սաֆրաստյան Ռ.[18], Պողոսյան Ս.[19] և Պողոսյան Վ.[20] տվյալ թեմային առնչվող աշխատություններից:

---

[10] Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX-րդ դարի վերջին XX դարի սկզբին, Երևան, 1980:

[11] Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժը XIX-XX դարում XXI դարի շեմին, Երևան, 2002:

[12] Սիմոնյան Պ., Հայկական հարցը և ռուս հասարակական միտքը 19-րդ դարի 90-ական թվականներին, Երևան, 2003:

[13] Սիմոնյան Պ., Ռուսաստանի օգնությունը արևմտահայ գաղթականներին (1895-1900), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1995, № 1:

[14] Հայոց պատմություն, հատոր III գիրք I, Երևան, 2010:

[15] Խուդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության ծնունդը, Երևան, 2000:

[16] Հատիկյան Հ., Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1877-1923 թթ., Երևան, 2016:

[17] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999:

[18] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրությունը. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

[19] Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, 1988:

[20] Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIXդ. Վերջ –XX դ. սկիզբ), Երևան, 2005:

Չնայած առկա ուսումնասիրություններին՝ 1890-ականների արևմտահայ գաղթականության մասնավոր կերպով օգնության հարցը խորությամբ և համակարգված ձևով ուսումնասիրված չէ, ինչը դարձնում է այս թեմայի մշակումը կարևոր և արդիական։

Ատենախոսության մեթոդաբանությունը։ Ատենախոսության շարադրման ընթացքում կիրառվել են պատմագիտական հետազոտության հիմնական մեթոդները՝ նպաստելով նյութի բազմակողմանի վերլուծությանը և ճշգրիտ գնահատմանը։

Մասնավորապես՝

- Պատմավերլուծական մեթոդ - օգտագործվել է անցյալում տեղի ունեցած իրադարձությունների պատճառահետևանքային կապերը բացահայտելու և գաղթականության շարժման ներքին շարժիչ ուժերը հասկանալու համար։
- Աղբյուրագիտական մեթոդ - կիրառվել է պատմական աղբյուրների, հիշողությունների, փաստաթղթերի, արխիվային նյութերի ուսումնասիրության և համեմատության ընթացքում՝ նյութի հավաստիությունը ստուգելու նպատակով։
- Համեմատական մեթոդ - թույլ է տվել համեմատել տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր տարածաշրջաններում արևմտահայ գաղթականության վիճակը, օգնության ձևերը և ազդեցությունները։
- Վերլուծական և համադրական մոտեցում - օգտագործվել է փաստերը խմբավորելու, ընդհանուր օրինաչափություններ դուրս բերելու և հետևություններ ձևակերպելու համար։

Մեթոդաբանական հիմքը պայմանավորված է թեմայի բազմաշերտությամբ և պահանջում է համատեղել թե՛ պատմական փաստերի քննությունն ու վերլուծությունը, թե՛ դրանց համատեքստային գնահատումը։

Ուսումնասիրության փորձաքննությունը։ Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ-ում կազմակերպված միջազգային և հանրապետական գիտական նստաշրջաններում և գիտաժողովներում։ Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի կողմից։

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը։ Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից։ Առաջին գլուխը կազմված է երկու, իսկ հաջորդ երկուսը երեք ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից։

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը։

Ատենախոսությունը նվիրված է 19-րդ դարի 90-ական թվականներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած զանգվածային կոտորածների հետևանքով ձևավորված արևմտահայ գաղթականության խնդիրների ուսումնասիրությանը՝ Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում: Աշխատության մեջ համակողմանիորեն վերլուծվում են արևմտահայ բնակչության բռնի տեղահանության պատճառները, գաղթականության ուղղությունները, սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև նրանց ցուցաբերված պետական, հասարակական, եկեղեցական և միջազգային մարդասիրական աջակցությունը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «1890-ական թթ արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքները և գաղթականության տեղաշարժերը» վերնագիրը, բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից առաջինում ներկայացված է արևմտահայերի զանգվածային կոտորածների սոցիալ-քաղաքական և ժողովրդագրական հետևանքները, երկրորդում՝ արևմտահայ գաղթականների տեղաշարժը և գաղթականների վերադարձի խնդիրը: Մասնավորապես անդրադարձ է կատարված ջարդերի հետևանքներին՝ ժողովրդական պատկերի աղճատմանը, կրոնափոխությանը, հայկական մշակութային ժառանգության համակարգված և հետևողական ջարդերին: Խոսվում է արևմտահայության գաղթի դրսևորումների, տեղաբաշխման, սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Անդրադարձ է կատարված գաղթի աշխարհագրական ուղղություններին: Ընդհանուր առմամբ, ներկայացված է 1890-ական թվականների ջարդերի և զանգվածային հալածանքների հետևանքով համատարած ու մեծածավալ երևույթը՝ գաղթը, որը խարխլեց արևմտահայ համայնքի սոցիալական, տնտեսական և հոգևոր հենքերը:

Երկրորդ գլուխն ունի ***«Ռուսական պետական, հասարակական և կրոնական կազմակերպությունների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը»*** խորագիրը և կազմված է երեք ենթագլխից: Սույն գլխում ներկայացված է արևմտահայ գաղթականներին ցուցաբերված օգնությունը: Նկարագրված է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության ցուցաբերված օգնությունը, նրա մասնաճյուղերի գործունեությունը և օգնության բաշխումը: Խոսվում է առաջ եկած խնդիրների վերաբերյալ՝ տեղավորման գործընթացի հետևանքով առաջ եկած հիմնախնդիրներից: Նկարագրվում է Կովկասի կառավարչապետության դիրքորոշումը և ցուցաբերված օգնությունը: Խոսվում է հայ առաքելական եկեղեցու ցուցաբերված դիրքորոշման մասին:

Երրորդ գլուխը՝ ***«Արևմտահայության օգնության կազմակերպումը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից»***, բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ ներկայացված են եվրոպական օգնության բազմաբնույթ ձևերը: Նախ, առաջատար բարեգործական կառույցները՝ բրիտանական և ֆրանսիական միսիոներական ընկերությունները, Կարմիր խաչի տարբեր ազգային մասնաճյուղեր, ինչպես նաև մի շարք եկեղեցական միություններ, ստեղծեցին օգնության ֆոնդեր և օգնության կայաններ:

Բացի նյութական օժանդակությունից, եվրոպական կազմակերպությունները կարևոր դեր խաղացին նաև որբերի հավաքագրման և նրանց կրթական ու սոցիալական ինտեգրման գործում՝ հիմնելով որբանոցներ, դպրոցներ ու ապաստարաններ։ Այս հաստատությունները ոչ միայն փրկում էին տուժածներին անմիջական մահվան վտանգից, այլև նպաստում էին հայ համայնքների վերակազմավորմանը և սոցիալական կառուցվածքի պահպանմանը։ Չնայած երբեմն դրա քողի տակ դիտարկվում էր այլ նպատակներ, բայց տվյալ ժամանակաշրջանում դա արևմտահայերի փրկության գին էր։

Եզրակացություններ: Ամփոփելով 1890-ական թթ. համիդյան ջարդերի հետևանքները և արևմտահայ գաղթականներին ցուցաբերած օգնության ուսումնասիրությունը հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- արևմտահայ գաղթականության տեղաշարժը 1890-ական թվականների ջարդերի և զանգվածային հալածանքների հետևանքով համատարած ու մեծածավալ երևույթ էր, որը խարխլեց արևմտահայ համայնքի սոցիալական, տնտեսական և հոգևոր հենքերը։ Զանգվածային տեղահանությունների արդյունքում գաղթականները փախան դեպի Ռուսական կայսրության տարածքներ, Եվրոպա և Ամերիկա՝ փնտրելով անվտանգություն ու ապաստան։
- այս զանգվածային տեղաշարժը փոխեց արևմտահայերի ապրելակերպը, մուտք գործեց նոր աշխարհագրական ու քաղաքական պայմանների մեջ՝ ստիպելով հարմարվել նոր հասարակական ու վարչական համակարգերին։
- արևմտահայ գաղթականությունը նոր միջավայրերում հանդես եկավ որպես ակտիվ սուբյեկտ՝ մասնակցելով օգնության և ինքնակազմակերպման գործընթացներին։ Այդ օգնությունը՝ նյութական, բարոյական և քաղաքական, ուղղված էր ոչ միայն անհատական գոյատևմանը, այլև համայնքային կառույցների պահպանմանը, ազգային ինքնության պահպանմանը և ազատագրական պայքարի ակտիվացմանը։
- անկախ ցարիզմի դիրքորոշմանը, ռուս առաջադեմ մտավորականներն ու ժողովրդական լայն զանգվածները իրենց հոգատար ձեռքը մեկնեցին և սատար եղան դժբախտության մեջ հայտնված արևմտահայ գաղթականներին։ Ռուսական կայսրությունը, այնուամենայնիվ, մշակեց սոցիալ-կառավարման համակարգ, որի միջոցով փորձեց կարգավորել գաղթականների ապաստանության բնակության հարցերը։
- զանգվածային ջարդերից փրկված արևմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ և հատկապես Արևելյան Հայաստան և Անդրկովկաս։ Գաղթականներին օգնելու նպատակով ստեղծվեցին բարեգործական տարբեր ընկերություններ։ Շատ գթասիրտ անհատներ ևս իրենց օգնության բաժինը հատկացրեցին արևմտահայ գաղթականներին։ Անգնահատելի աշխատանք կատարեց ԿՀԲԸ։
- կարևոր էր Հայ Առաքելական եկեղեցու դերակատարությունը, քանի որ այն հանդիսանում էր ոչ միայն հոգևոր, այլև կազմակերպական-հասարակական կենտրոն։

Եկեղեցիների միջոցով կազմակերպվեցին բարեգործական հոսքեր՝ ուղղված սննդի, բժշկական օգնության, ինչպես նաև մշակութային և կրթական ծառայությունների ցուցաբերմանը։ Գաղթականները հնարավորություն ունեցան մասնակիորեն պահպանելու իրենց լեզուն, հավատքը և ազգային մշակույթը։

- գաղթականների խնդիրները գտնվում էին նաև միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Եվրոպական և ամերիկյան մարդասիրական կազմակերպությունները սկսեցին համատեղ աշխատանքներ ծավալել, որոնք առաջին հերթին ուղղված էին գաղթականությանը նյութապես աջակցելուն։ Կազմակերպությունների մարդասիրական քայլը ոգևորեց եվրոպական և ամերիկյան հասարակություններին ակտիվորեն աջակցել հայությանը:
- օժանդակությունների արդյունքում հայ գաղթականության վիճակը որոշակիորեն կայունացվեց։ Գաղթականներից շատերը նոր միջավայրերում սկսեցին վերականգնել իրենց կենցաղը։

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ 1890-ական թթ. Համիդյան ջարդերը ոչ միայն առկա էին որպես ողբերգություն, այլև դառնալով մի թեժ փորձության դրվագ՝ հայ ժողովրդի համար, որը մեծապես ազդեց նրա պատմական ընթացքի վրա։ Այս ողբերգական դեպքերն ու դրանց հետևանքները, ինչպես նաև գաղթականներին ցուցաբերված օգնությունը, շեշտում են հայ ժողովրդի կենսունակությունը՝ ներառելով նոր միավորներ, որոնք հետագայում ծառայում էին ազգային ինքնության վերականգնման և ազատագրական պայքարի նպատակներին։

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. **Քոսյան Լ.,** 1890-ական թթ. հայկական կոտորածների արձագանքները «Մուրճ» պարբերականում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, N 1, էջ 128-137:
2. **Քոսյան Լ.,** Կարսի մարզում ապաստանած արևմտահայ փախստականների դրությունը և մոտավոր թվաքանակը 1890-ական թթ., «Հայագիտության հարցեր», 2015, N 3, էջ 46-51:
3. **Քոսյան Լ.,** Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության մասնաճյուղերից ստացած զեկուցագրերը, «Հայագիտության հարցեր», 2016, N 3, էջ 175-191:
4. **Քոսյան Լ.,** Գերմանական միսիոներների որբախնամ գործունեությունը XIX դարի երկրորդ կեսին, «Հայագիտության հարցեր», 2017, N 3, էջ 31-41:
5. **Քոսյան Լ.,** Արևմտյան Հայաստանում ամերիկյան բողոքական միսիոներների ցուցաբերած օգնության պատմությունից (XIX դարի 90-ական թթ.), «Հայագիտության հարցեր», 2018, N 3, էջ 58-67:
6. **Քոսյան Լ.,** Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեության պատմությունից (1890-ական թթ), «Հայագիտության հարցեր», 2020, N 2, էջ 94-101:
7. **Քոսյան Լ.,** Հայերի կրոնափոխությունն Օսմանյան կայսրությունում 1890-ական թվականներին, «Հայագիտության հարցեր», 2021, N 1, էջ 83-89:
8. **Քոսյան Լ.,** Արևմտահայ գաղթականությունը Երևանի նահանգում 1894-1897 թթ.՝ ըստ «Մշակ» թերթի, «Էջմիածին», 2025, N Գ, էջ 110-121:

КОСЯН ЛИЛИТ СМБАТОВНА

МИГРАЦИЯ ЗАПАДНЫХ АРМЯН В ВОСТОЧНУЮ АРМЕНИЮ И ЗАКАВКАЗЬЕ В 90-Е ГОДЫ XIX ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита диссертации состоится 20-го февраля 2026 г. в 13^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Цель данной диссертации - представить подробную и ценную информацию о депортации, положении и социально-экономическом состоянии западноармянских беженцев, переживших резню в Хамиде, а также об организации помощи этим беженцам, большая часть которой представлена впервые.

Актуальность исследования обусловлена тем, что в нем обобщаются последствия резни, процессы перемещения западноармянских беженцев и формы, оказанной им помощи. На основе ряда ценных материалов, содержащихся в архивных документах и периодических изданиях, представленная диссертация содержит новую и ранее не публиковавшуюся информацию о положении, миграции и поддержке западноармянских беженцев.

Диссертация состоит из введения, трех глав с соответствующими подразделами, заключения, а также списка источников и литературы. Во введении представлены общая характеристика работы, ее актуальность, цель и задачи исследования, научная новизна, практическая значимость и методология.

Первая глава диссертации -«Последствия массовых убийств западных армян в 1890-х годах и процессы эмиграции»- посвящена анализу последствий массовых убийств. В ней

рассматриваются процессы и направления перемещения беженцев. В целом глава отражает широкомасштабный и массовый характер эмиграции, которая подорвала социальные, экономические и духовные основы западноармянской общины.

Вторая глава – «Поддержка западноармянской диаспоры российскими государственными, общественными и религиозными организациями»— состоит из трех подразделов. В ней анализируется помощь, оказываемая западноармянской диаспоре. Подробно рассматривается деятельность Армянского благотворительного общества Кавказа, работа его отделений и механизмы распределения помощи. Освещаются проблемы, возникшие в процессе расселения беженцев, а также позиция кавказской администрации и оказываемая ею поддержка. Отдельное внимание уделяется роли Армянской Апостольской Церкви.

Третья глава - «Организация помощи западным армянам европейскими и американскими организациями» — также состоит из трех подразделов. В ней представлены различные формы европейской и американской помощи. Рассматривается материальная поддержка, оказываемая ведущими благотворительными организациями, включая британские и французские миссионерские общества, национальные отделения Красного Креста, а также ряд церковных объединений. Эти организации создавали фонды и пункты помощи. Наряду с материальной поддержкой, они сыграли важную роль в сборе сирот, их образовательной и социальной интеграции, создании детских домов, школ и приютов.

В заключении подводятся основные итоги исследования.

KOSYAN LILIT SMBAT

THE MIGRATION OF WESTERN ARMENIANS TO EASTERN ARMENIA AND TRANSCAUCASIA IN THE 90S OF THE 19TH CENTURY

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The Defense of the Dissertation will be held on February 20, 2026, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

RESUME

The aim of this dissertation is to present detailed and valuable information about the deportation, situation and socio-economic condition of Western Armenian refugees who survived the Hamidian massacres as well as the organization of assistance to these refugees, most of which is presented for the first time.

The relevance of this research lies in its generalization of the consequences of the massacres; the displacement of Western Armenian refugees and the assistance provided to them. Based on a number of valuable materials available in archival documents and periodicals, the presented dissertation provided new and unpublished information on the situation, migration, and support of Western Armenian refugees.

The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subsections, a conclusion and a list of sources and literature.

The introduction presents the general characteristics of the dissertation, its relevance, the goals and objectives of the research, the scientific novelty, practical significance and methodology.

The First Chapter of the dissertation, "The Consequences of the Massacres of Western Armenians in the 1890s and the Displacement of Refugees" describes the aftermath of the massacres. It examines the processes and directions of refugee movement. Overall, this chapter presents the widespread and large-scale phenomenon of emigration, which undermined the social,

economic, and spiritual foundations of the Western Armenian Community.

The Second Chapter "Support for the Western Armenian Diaspora by Russian State, Public and Religious Organizations", consists of three subsections. This chapter presents the aid provided to the Western Armenian Diaspora. The activities of the Armenian Benevolent Society of the Caucasus, the work of its branches and the mechanisms for distributing aid are examined in detail. The issues that arose during the refugee resettlement process are highlighted as well as the position of the Caucasus administration and the support it provides. Special attention is given to the role of the Armenian Apostolic Church.

The Third Chapter "The Organization of Aid to Western Armenians by European and American Organizations", consists of three subsections. This chapter presents various forms of European aid. It examines the material assistance provided by leading charity organizations, such as British and French missionary societies, various national branches of the Red Cross and a number of church organizations. These organizations established aid funds and relief points. In addition to material support, European organizations also played a significant role in gathering orphans and their educational and social integration, as well as the creation of orphanages, schools, and shelters.

The conclusion summarizes the key findings of the dissertation.